կումն, ի դայ տուի զգանձանակն Սուրբ Սթոռոյս, զոր և կալաւ ամս ԺԲ։ Ստիպէր զժողովուրդն իբր զքահանայս և զվարդապետս թէ Տո՛ւք լուսգին Տանն սրբոյ հոգոց ձերոց, որում գալուրի զգիր չնչինս գծէի։ Այս քրիստոսասէր առաքէ զՀարազատն իմ յերուսաղէմ յետ ծնելոյ չուառիս ամսոց երից, և գրէ առ հայրապետն, զի ձեռնադրեաց քահանայ։ Եւ յորժամ եկն, զամենայն ընթրիսն տեսեալ թէ Յանուն ննջեցելոց իմոց մատուսցի պատարագ։ Այս բարեպաշտ ամենայն մեծութեամբ իւրով խոնարհէր իրիցուն, որպէս Թէոդոս առ Ամբրոսիոս՝ յամենայն գործս իւր։ Յաւուրս սորա ամենայն որբք և այրիք փոքր մասիս Հայոց որ ի քաղաքս՝ խնդային։ Եղև պաշտօնեայ առ ամենայն վարդապետս և եպիսկոպոսս, բազմաց հայր գտանէր, զօտարս և զվշտագնեալս[1]) մխիթարէր և յամենեցունց ընկալեալ զաւրհնութիւնս, և ի գնալն՝ հանդերձ նամակաւ աւրհնութիւնս, գոհութիւնս և շնորհակալութիւնս տային, որ կայ մինչև ցայսօր։ Եկեղեցեաց տայր պարգևս, սպասս և անօթս, գիրք և աւետարան, ճաշոցս և այսմաւուրս, մինչև եհաս լուր նորա ի Մովսէս կաթողիկոսն, զոր ծանօթացոյց մեծ Խաչատուր վարդապետն ի գալն իւրում աստ ի մօտ վախճանիլ նոցունց։ Եւ նստաւ կաթողիկոս Սուրբ Էջմիածնի Փիլիպպոսն, և գրէր սիրոյ և աւրհնութեան, և ի սմանէ երթայր ընծայն ամէնաւրհնեալ Տանն։ Եւ յորժամ կամեցաւ Հոգևորտէրն երթալ յերուսաղէմ, գրեաց սմա ըղձիւ եթէ Գայցես զի ի միասին կատարեսցուք զուխտ սուրբ եւ զմիմեանս տեսցուք։ Եւ յորժամ լուաւ սա, վաղվաղակի պատրաստեալ զինքն ել ի ճանապարհ հանդերձ ամուսնաւն ընդ իւր, և առ զստրուկս ամենայնի որ գրեալ կայ [Ռ]ՂԷ թվականն։

1) վշտանգեալս.